5847

Հ. Հ. Ա. Հ.

ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՏՐԱՎԻԱՏԱ

ՈՊԵՐԱ ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԼԻԲՐԵՏՈ
ՅԵՎ
ԵՐԱԳԻՐ

782
O-57

ԵԵՐԵՎԱՆ 1936

2 .09. 2013

40602



ՋՈՒԶԵՊՊԵ ՎԵՐԴԻ
ДЖУЗЕППЕ ВЕРДИ 1813—1901

ՍՈՉ ԷՕՍ Ճ5

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Գլխ. Պետ. Թանգարան
ՀԱԽՀ-ՍՍՀ
Ա. Մեսրոպի
Ա. ՄԱՍՈՒՐԻՑՅԱՆ ԱՆՎԱՆ

Հ. Խ. Ա. Հ.
ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

789
0-57

ՏՐԱՎԻԱՏԱ

ՈՊԵՐԱ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

Ցերաժշտությունը՝ Ջ. ՎԵՐԴԻԻ
Ըստ՝ Ա. ԴՅՈՒՄԱՅԻ
«ԿԱՄԵԼԻՍՋԱՐԴ ՏԻԿԻՆ» ԴՐԱՄԱՅԻ

ԵՐԵՎԱՆ 1986

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Գլխ. Պետ. Թանգարան
ՀԱԽՀ-ՍՍՀ

ՎԵՐԴԻ

(1813 — 1901)

Իտալացի անվանի կոմպոզիտոր Վերդին ծնվել է 1813 թվի հոկտեմբերի 10-ին։ Վերդիի յերաժշտական ընդունակությունները հանդես յեկան վաղ հասակից։ Միլանի կոնսերվատորիան չընդունվեց, վորովհետև կոնսերվատորիայի պետանտ պրոֆեսորները պատանի Վերդիին յերաժշտականորեն անընդունակ գտան։ Վերդին սկսեց մասնավոր դասեր վերցնել։

1839 թվին Միլանում բեմադրվեց Վերդիի առաջին ոպերան, իսկ 1893 թ. նույն թատրոնում հեղինակի վերջին ոպերան։

Վերդին գրել է ընդամենը 31 ոպերա. Նրա ոպերաների համար նյութ են հանդիսացել «Ոթելլո», «Մակբեթ», «Ավազակներ», «Դոն Կարլոս» և այլ հռչակավոր գրական յերկեր։

Իտալացի մեծանուն կոմպոզիտորը հա-

մարվում է 19-րդ դարի ոպերային արվեստի խոշոր ներկայացուցիչներից մեկը։

Վերդին վախճանվեց 1901 թվի հունվարի 27-ին։

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՎԻՈԼԵՏ ՎԱԼԵՐԻ (ՏՐԱՎԻԱՏԱ, այսինքն մոլորված կին)—սոպրանո

ՖԼՈՐԱ ԲԵՐՈՒԱ—սոպրանո

ԱՆՆԻՆԱ, Վիոլետի աղտխինը—մեցցո սոպրանո

ԺՈՐԺ ԺԵՐՄՈՆ—բարիտոն

ԱԼՖՐԵԴ ԺԵՐՄՈՆ, նրա վորդին—տենոր

ԳԱՍՏՈՆ, ՎԻԿՈՆՏ դ՝ ԼԵՏՈՐԵՐ—տենոր

ԲԱՐՈՆ ԴՈՒՖՈԼ—բարիտոն

ՄԱՐՔԻԶ դ՝ ՈՐԸՆՅԻ—բարիտոն

ԴՈԿՏՈՐ ԳՐԵՆՎԻԼ—բաս

ԺՈԶԵՖ, Վիոլետի ապատավորը

Գործողության վայրը՝ Փարիզ յեվ իր շրջակայքը։

Ժամանակը 19 րդ դարի առաջին կեսը։

Առաջին անգամ բեմադրվել է 1853 թվի մարտի 6-ին։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերեկույթ Վիոլետի տանը։ Գաստոնը Ալֆրեդին ներկայացնելով Վիոլետին, ասում է, որ նա գրավված է նրա գեղեցկությամբ։ Վիոլետի հարցին՝ ճշմարիտ է արդյոք, Ալֆրեդը պատասխանում է, որ այդպես է։ Ալֆրեդը յերգում է մի յերգ, որով հրավիրում է բոլորին զվարճանալ։ Վիոլետը պատասխանում է, որ նրա յերգածը միանգամայն ճիշտ է, այս աշխարհում ամեն ինչ վոչինչ է, բացի յերջանկությունից։ Վիոլետը բոլորին վարակում է իր աշխուժությամբ և հրավիրում է նրանց պարելու։ Հանկարծ սաստիկ հազը խեղդում է նրան։ Հյուրերն անցնում են մյուս դահլիճ։ Վիոլետի մոտ մնում է միայն Ալֆրեդը։ Նա խորհուրդ է տալիս փոխել իր կյանքի յեղանակը։ Վիլոտեն ասում է, որ ուրիշ կյանք իր համար այլևս հնարավոր չե և որ ինքն այժմ այլևս վոչ

վոքի պետք չե։ Ալֆրեդն ասում է, որ յեթե նա պատկանելու լինի իրեն, ինքն ամեն ջանք գործ կդնի խնամելու նրա կյանքը։ Վիոլետը զսպելով իր հուզմունքն ասում է, որ ինքը չարժե նրա սիրուն, որ նրա կյանքը կխորտակվի իր հետ։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ամառանոց Փարիզի շրջակայքում։ Ալֆրեդը վիոլետի հետ բնակվում է այդտեղ։ Անսպասելի կերպով գալիս է Ժորժ Ժերմոնը՝ Ալֆրեդի հայր։ Ժորժ Ժերմոնը խընդրում է նրան զոհաբերել իրեն ի սեր Ալֆրեդի քրոջ։ Խնդիրն այն է՝ որ նա նշանված է, շուտով պիտի ամուսնանա, սակայն փեսայի ծնողներն դեմ են ամուսնությանը, որովհետև Ժերմենների ընտանիքը վարկաբեկված է, շնորհիվ Ալֆրեդի Վիոլետի դատապարտելի անցյալի ունեցող մի կնոջ հետ ունեցած կապի։ Վիոլետը զարմացած նրա պահանջից, պատասխանում է, որ նա ուժ չունի հրաժարվելու Ալֆրեդից և

վոր այդ սիրտ մեջ է կայանում իր կարճատև կյանքի վողջ յերջանկությունը։

Սակայն ներքին ծանր պայքարից հետո նա զիջում է Ժերմոնի աղերսանքին։ Հրաժեշտ տալով Ժերմոնին, նա խնդրում է հայտնել Ալֆրեդին իր զոհաբերության մասին։ Նա նամակ է գրում Ալֆրեդին։ Գալիս է Ալֆրեդը։ Ալֆրեդը հարցնում է, թե ում է հասցեյագրված այն։ Վիոլետը շփոթված պատասխանում է, վոր նամակը հասցեյագրված է նրան։ Արցունքները խեղդում են նրան։ Նա ուժ չունի դիմադրելու և արտասվում է, բայց կրկին զսպում է իրեն։ Հանգստացնելով Ալֆրեդին, վոր իր տխրությունն անցավ արդեն, նա շտապով հեռանում է։ Քիչ անց, գալիս է Անինան և Ալֆրեդին հանձնում մի նամակ և տեղեկացնում, վոր Վիոլետը մեկնել է Փարիզ, Ֆլորայի մոտ, Այդ իսկ րոպեին հայտնվում է Ալֆրեդի հայրը։ Ծերունին աշխատում է հանգստացնել նրան։ Ալֆրեդի սիրտը բորբոքվում է վրեժի զգացմունքով և նա դուրս է վազում գոչելով՝ «Ո, վրիժառու կլինեմ»։

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆլորայի տանը։ Մարքիզն հաղորդում է, վոր Վիոլետը և Ալֆրեդը բաժանվել են և Վիոլետը միացել է բարոն Դուֆոլին։ Գալիս է Ալֆրեդը և նստում է թուղթ խաղալու, վորպեսզի խլացնի ներքին անհանգստությունը։ Հետո գալիս է Վիոլետը բարոնի հետ թեանցուկ, բարևելով Ֆլորային։ Բարոնը Վիոլետային ցույց է տալիս խաղացող Ալֆրեդին։ Վիոլետը սաստիկ շփոթված է։ Ֆլորան բոլորին հրավիրում է ընթրիքի։ Բոլորը գնում են։ Վիոլետն առանձին մնալով Ալֆրեդի հետ, խնդրում է հեռանալ, վախենալով, վոր նրա և բարոնի մեջ կռիվ կարող է ծագել։ Ալֆրեդը համաձայնում է հեռանալ այն պայմանով միայն, յեթե նա կհեռանա իրեն։ Վիոլետը պատասխանում է, վոր դա անհնարին է և խոստովանում է, վոր յերդվել է խուսափել նրանից։ — «Ո՞ւմ եք յերդվել», — հարցնում է Ալֆրեդը.—«Նրան, ով իշխում է իմ կյան-

քին».—պատասխանում է Վիոլետը։—«Դուֆոլը չէ՞ արդյոք» — հարցնում է Ալֆրեդը։ Վիոլետը ուժի ճիգ գործ դնելով, դրական պատասխան է տալիս։ Ալֆրեդը կանչում է բոլոր հյուրերին և նրանց ներկայությամբ հայտարարում, որ Վիոլետը, սիրելով իրեն, ծախել է իր ամբողջ կարողությունը և որ այժմ նա վերադարձնում է նրան բոլորը։ Այդ բոպեյին ներս յեկած ծերունի ժերմոնը ականատես է լինում այդ տեսարանին։ Վիոլետը դառը կշտամբանքով ասում է նրան, որ յեթե նա իմանա իր սիրո վողջ ուժը, ապա նա այդպես անագորույն չեր պատժի նրան, բայց կգա ժամանակ և նա կիմանա իր լռելյան տառապանքի պատճառը։

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Վիոլետի ննջարանը։ Նա ծանր հիվանդ է։ Գալիս է բժիշկը, որը նրան հուսադրում է, որ շուտով կառողջանա։ Բայց Աննիֆային հայտնում է, որ Վիոլետի ժամերը հաշված են։ Իմանալով, որ այդ որը տոն է, Վիոլետը հրամայում է իր մնացած դրամի մի մասը բաժանել աղքատներին։ Միայնակ մնալով, նա հանում է մի նամակ և կարդում։ Ժորժ Ժերմոնը հաղորդում է, որ որդու և բարոնի մեջ մենամարտ է տեղի ունեցել և վերջինս թեթև վիրավորված է և որ Ալֆրեդը շուտով կվերադառնա։ Գալիս է Աննինան նկատելի հուզմունքով և նախապատրաստում Վիոլետին անսպասելի ուրախության համար։ Վիոլետն անմիջապես հասկանում է, որ Ալֆրեդն է յեկել և սաստիկ հուզվում է։ Իրոք, ներս է վազում Ալֆրեդը։ Նա հորից իմացել է ամբողջ ճշմարտությունը։ Բերկրանքով լցված, նրանք ասում են միմիանց, որ յերջանկությունը կրկին վերադարձել է իրենց համար և այժմ այլևս ոչ ոք նրանց բաժանել չի կարող։ Ուժգին հուզմունքից Վիոլետը կրկին ուշաթափվում է։ Գալիս են Ժորժ Ժերմոնը և բժիշկը։ Վիոլետը գրկում է Ալֆրեդին, ասելով, որ

այժմ ուշ է, վոր նա զգում է իր մոտալուտ վախճանը։ Մի ակնթարթ հետո նա մեռնում է Ալֆրեդի գրկում։

ԾՐԱԳԻՐ

ՏՐԱՎԻԱՏԱ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

(Այբուբենական կարգով)

Վիոլետ Վալերի	Դանիելյան Հ. *(վաստ. արտ.)*
Ֆլորա Բերվուա	Ցեվանգուլյան Ս. Քեչեկ Լ.
Աննինա (Վիոլետի աղախինը	Լիգնոս Ա. Մովսեսյան Ն.
Ժորժ Ժերմոն	Շարա Տալյան *(վաստ. արտ.)* Սերդոբով Ն.
Ալֆրեդ Ժերմոն (նրա որդին)	Կարատով Ա. *(վաստ. արտ.)* Սակրատյան Ն.
Գաստոն . . .	Բաղդասարյան Գ. Պոպով Մ.

Բարոն Դուֆոլ	Կորժենյան Ս.
Մարկիզ դ՝ Ոբընյի	Անդրեյեվ Ի.
Դոկտոր Գրենվիլ	Այվազյան Տ. (վաստ. արտ.) Ալենակ Վ.
Իոսիֆ	Կասպերեվիչ Ա.

Բեմադրություն
վաստ. ռեժ. . . Լ. ՓԱԼԱՆԹԱՐԻ

Դիրիժյոր . . Մ. Թավրիզյան

Նկարիչ . . . . . Ալեք Դանդուրյան

Բալետմեյստեր . . Վ. Պրեսնյակով

Խորմեյստեր . Վ. Նիկոլսկի

Ռեժ. ուղնական Գ. Վասկանյան

4-րդ գործողության մեջ, ջութակի սոլոն կկատարի որկեստրի սոլիստ Ս. Խորոզյանը

Բեմի մաշինիստ և հյուսն. արհեստ. վար. Ղազարյան Ե., Դերձ., արհեստ. վար. Ամիրյան Ա., Բուտաֆոր՝ Սաֆարյան Մ., Ռեկվիզիտ՝ Վոսյան Հ., Վարսավիրա՝ Մանկալյան Ա.

Գլավլիտ № 399, պատվեր № 671, տիրաժ 1200

Դուդերգատի տպարան Երևան

«Ազգային գրադարան»
NL0309506

690

ԻՆԸ 50 ԿՈՊ.